

ԻՐԱՆԱԿԱՆ ՕՈՒՆ ՆԵՐՊՐԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏԱԿՈՐ ՈՒՈՐՏՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Մոհսեն ՀԵՅՂԱՐԻ

ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ

Բանալի բառեր. Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, բացահայտ և ներուժային համեմատական առավելություն, ԵՏՄ շուկա, նպաստավոր ոլորտներ

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումն էական ազդեցություն ունի յուրաքանչյուր տնտեսության զարգացման վրա: Սա հատկապես արդիական է զարգացող երկրների համար, որոնց ներքին ֆինանսավորման աղբյուրները բավական սահմանափակ են: ՀՀ անկախացման առաջին օրերից սկսած հիմք դրվեց հայ-իրանական բարիդրացիական հարաբերություններին, սակայն, այդուհանդերձ մինչ օրս իրանական ՕՈՒՆ-երը ՀՀ տնտեսությունում բավական փոքրածավալ են: Թերևս սա ունի մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ, սակայն, կարծում ենք՝ ամենաէական պատճառներից մեկը ՀՀ ներքին սպառողական շուկայի փոքր չափն է: 2015թ. ՀՀ-ի ԵՏՄ անդամակցությամբ փորձ արվեց լուծել ներքին սահմանափակ պահանջարկի խնդիրը՝ հնարավորություն տալով ՀՀ-ում ներդրում կատարող կազմակերպություններին արտոնյալ պայմաններով դուրս գալու ԵՏՄ շուկա¹: Այս երևույթը կարելի է համարել նոր փուլ հայ-իրանական տնտեսական հարաբերությունների համար և այն նոր վերլուծության կարիք ունի: Հասկանալի է, որ իրանցի գործարարները չեն կարող ներդրումներ իրականացնել ՀՀ տնտեսության բոլոր ոլորտներում, ուստի անհրաժեշտ է բացահայտել այն ոլորտները, որոնցում իրանցի գործարարների կատարած ներդրումները կստեղծեն ավելի մեծ արդյունք:

Նախ անդրադառնանք մեր կողմից կիրառվելիք մեթոդաբանությանը: Թե որ ոլորտները կարող են դառնալ իրանցի ներդրողների համար հեռանկարային պարզելու համար նախ և առաջ պետք է հասկանալ, թե ինչ նպատակով են նրան ՀՀ-ում ներդրում իրականացնելու՝ ներքին պահանջարկը բավարարելու², թե՞ արտաքին շուկաներ գրավելու: Հասկանալի է, որ եթե նպատակը լիներ միայն ներքին պահանջարկի բավարարումը, ապա մինչ օրս արդեն իսկ ՀՀ-ում կլինեին մեծածավալ իրանական ներդրումներ, սակայն ինչպես ցույց է տալիս առկա վիճակագրությունը իրանական ներդրումները ՀՀ ընդհանուր ներդրումների շատ փոքր մասն են կազմում: Ուստի իրանական ներդրումների ներգրավման գրավականը պետք է դառնա արտաքին շուկաների գրավումը, և հատկապես՝ ԵՏՄ շուկայի, որտեղ ՀՀ-ում

¹ Манасерян Татул, Об ожиданиях делового сообщества Армении от участия страны в ЕАЭС, 24.02.2016, available at: http://www.soyuzinfo.am/rus/analitics/detail.php?ELEMENT_ID=1825

գործունեություն ծավալող գործարարները կարող են արտահանել իրենց արտադրանքը արտոնյալ պայմաններով: Այսպիսով, ստացվում է, որ որպես ներդրումային հեռանկար ունեցող ոլորտներ նախ և առաջ պետք է դիտարկել դեպի ԵՏՍ արտահանման ներուժ ունեցող ոլորտները: Իսկ ո՞ր ոլորտներն ունեն արտահանման ներուժ: Հասկանալի է, որ դրանք այն ոլորտներն են, որոնք կարողանում են արտաքին շուկաներում ապահովել համեմատական կամ մրցակցային առավելություն: Սակայն, քանի որ մրցակցային առավելությունը հաշվարկելու համար մինչ օրս որևէ հստակ ցուցանիշ չկա, ուստի ստիպված կլինենք ՀՀ ներդրումային հեռանկար ունեցող ոլորտների բացահայտման հիմքում դնել համեմատական առավելության հաշվարկը: Ընդ որում՝ համեմատական առավելություն ասելով տվյալ պարագայում մենք նկատի չունենք Դ.Ռիկարդոյի կողմից առաջարկված համեմատական առավելության տեսությունը, այլ դրա մեթոդյա լրամշակումներն ու վերափոխումները, մասնավորապես՝ բացահայտ համեմատական առավելության ինդեքսը, որը 1965թ. առաջ է քաշվել Բ.Բալասայի կողմից և ներուժային համեմատական առավելության ինդեքսը, որը 2006թ. առաջ է քաշվել Ռ.Հաուսմանի և Բ.Կլինգերի կողմից: Բ.Բալասայի բացահայտ համեմատական առավելության ինդեքսի հիման վրա՝ բացահայտվում են այն ոլորտները, որոնք այսօր արդեն ունեն արտահանման համեմատական առավելություն, իսկ Ռ.Հաուսմանի և Բ.Կլինգերի մեթոդաբանությունն օգնում է բացահայտել այն ոլորտները, որոնք այսօր դեռևս չունեն համեմատական առավելություն, սակայն շատ մոտ են գտնվում համեմատական առավելություն ունեցող ոլորտներին, ունեն համեմատական առավելության ներուժ և որոշակի կառուցվածքային վերափոխումներ իրականացնելու պարագայում կարող են ունենալ համեմատական առավելություն:


Այսպիսով, կարճաժամկետ ժամանակահատվածի համար իրանցի գործարարների համար ներդրումային նպաստավոր ոլորտների բացահայտման համար կօգտագործենք Բալասայի կողմից մշակված բացահայտ համեմատական առավելության ինդեքսը, իսկ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարի համար՝ Հաուսմանի և Կլինգերի՝ ներուժային համեմատական առավելության ինդեքսը: Բնականաբար որպես արտահանման շուկա, որտեղ ոլորտը պետք է ունենա բացահայտ կամ ներուժային համեմատական առավելություն կդիտարկվի ԵՏՍ շուկան:

Դիտարկումը կիրականացվի 2000-2014թթ. համար՝ օգտագործելով տարեկան ցուցանիշներ: Իսկ ապրանքախմբերի դասակարգման համար կընտրենք միջազգային դասակարգման HS1988/92 տարբերակը, որով ներկայացվում է ԻԻՀ առևտրի տվյալները: Բացի կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկար առանձնացնելուց, մենք կառանձնացնենք նաև այն

ուլորտները, որտեղ իրանցի գործարարներին ձեռնտու կլինի ներդրում իրականացնել հայ գործարարների հետ համատեղ ձեռնարկություններում և այն ուլորտները, որտեղ կարող են նպաստավոր կլինի միայն իրանական կապիտալով ձեռնարկությունների հիմնումը, ինչպես նաև՝ կախված ձեռնարկության գործունեության ուլորտից՝ կառանձնացնենք նաև ՀՀ այն տարածաշրջանը, որտեղ արդյունավետությամբ կարող են ներդրում իրականացնել իրանցի գործարարները: Կոնկրետացնենք ՀՀ տնտեսության այն ուլորտները, որոնք արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեն ԵՏՄ շուկայում, ինչպես նաև ԻԻՀ տնտեսության այն ուլորտները, որոնք արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեն ԵՏՄ շուկայում: Հաշվարկների արդյունքում կառանձնացվեն 3 տարբերակներ՝

1. Ուլորտներ, որտեղ ԻԻՀ-ն ունի համեմատական առավելություն, ՀՀ-ն՝ ոչ
2. Ուլորտներ, որտեղ ՀՀ-ն ունի համեմատական առավելություն, ԻԻՀ-ն՝ ոչ
3. Ուլորտներ, որտեղ երկուսն էլ ունեն համեմատական առավելություն:


3 տարբերակով ներդրման նախապատվելի տեսակը համատեղ ձեռնարկությունում ներդրումն է, ընդ որում՝ այն կարող է շահավետ լինել նաև 2 տարբերակի պարագայում, իսկ 1 տարբերակի պարագայում՝ կառաջարկենք հիմնել միայն իրանական կապիտալով գործող ձեռնարկություն:




Գծապատկեր 1. Կարճաժամկետ ժամանակահատվածում դեպի ԵՏՄ շուկա արտահանման հնարավորություն ընձեռող ՀՀ տնտեսության ուլորտները իրանական ներդրումների տեսանկյունից²

² Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա վերլուծության ու հաշվարկների արդյունքում

Այսպիսով՝ համադրելով ԵՏՄ շուկայում ունեցած ՀՀ և ԻԻՀ բացահայտ և ներուժային համեմատական առավելության արդյունքները ներկայացնենք ՀՀ տնտեսության ոլորտները, որտեղ իրանցի գործարարները կարող են արտադրանքն արտահանել ԵՏՄ շուկա՝ տարանջատելով կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նման հնարավորության հավանականությունը և նշելով այդ ոլորտներում հայ գործարարների հետ համատեղ ձեռնարկություններ հիմնելու նախապատվելի ուղղությունները՝ գծ. 1, 2, 3:



Գծապատկեր 2. Միջին ժամկետում դեպի ԵՏՄ շուկա արտահանման հնարավորություն ընձեռող ՀՀ տնտեսության ոլորտները իրանցի ներդրողների համար³



Գծապատկեր 3. Երկարաժամկետ ժամանակահատվածում դեպի ԵՏՄ շուկա արտահանման հնարավորություն ընձեռող ՀՀ տնտեսության ոլորտները իրանական ներդրումների տեսանկյունից⁴

³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա վերլուծության ու հաշվարկների արդյունքում

Այսպիսով, ներկայացրեցինք կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում իրանական ներդրումների համար ՀՀ բարենպաստ ոլորտները՝ ԵՏՄ շուկա դուրս գալու տեսանկյունից և տարանջատեցինք ներդրման համար համատեղ ձեռնարկության միջոցով կամ զուտ իրանական կապիտալով ներդրում կատարելու համար նպաստավոր ոլորտները: Սակայն անհրաժեշտ է անդրադառնալ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներդրումային հնարավորությամբ երկու ոլորտի՝ կենդանական և բուսական ծագման յուղեր, մեղրամոմ, օձառ, մաքրող միջոցներ: Այդ ոլորտներից առաջինում ԻԻՀ-ն ունի համեմատական առավելություն միջնաժամկետում, իսկ ՀՀ-ն՝ երկարաժամկետում, իսկ երկրորդում՝ հակառակը և նպաստավոր է համատեղ ձեռնարկության միջոցով ներդրումը: Այժմ անդրադառնանք իրանական ներդրումների համար նպաստավոր տարածաշրջաններին՝ ելնելով տվյալ արտադրանքի հունքի շուկայի մոտիկության գաղափարից, որի համաձայն ներկայացնենք հետևյալները.

- Կաթ, կաթնամթերք, ձու, մեղր, այլ սննդամթերք, մսից, ձկնից և այլ ծովամթերք, կենդանական և բուսական ծագման յուղեր, մեղրամոմ, միս և մսամթերք (ձեռնարկություն հիմնելու նպաստավոր վայրերը Սյունիքի, Արարատի և Տավուշի մարզերն են՝ զարգացած անասնապահությամբ):

- Ձկան և խեցգետնավորների արտադրության համար նպաստավոր պայմաններ ակռա են Արարատի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում:

- Բանջարեղեն, մրգեր, ընկույզ, բուսական նյութեր, բուսական արտադրանք, ծառեր, թփեր, պատրաստի անասնակերի համար՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի, Շիրակի, Լոռվա և Կոտայքի մարզերը:

- Հայ-իրանական սահմանին “Սյունիք” ազատ գոտու դեպքում Սյունիքի մարզը կարող է նպաստավոր լինել նաև սուրճ, թեյ, մատե և այլ համեմունքներ, հանքաքար, խարամ և մոխիր, սպիտակուցային նյութեր, սոսինձ, գորգեր, հատակի ծածկոցներ, կտորներ, ասեղնագործած կտորներ, գոբելեններ, տրիկոտաժե պաստառ, կոշիկ, զուգագուլպա, կերամիկա, ապակի, թաղիք, բամբակ, գործվածք, ներկանյութեր, օձառ, մաքրող միջոցներ, հագուստի արտադրության համար, քանի որ սրանք այն ոլորտներն են որոնցում ներկայումս ԻԻՀ-ն ունի ԲՀԱ կամ ՆՀԱ, իսկ ՀՀ-ն՝ ոչ, ուստի այս ոլորտում ԻԻՀ-ից ներմուծված հունքով հնարավոր է ապահովել էլ զգալի արդյունքներ: Այսպիսով, ներկայացրինք ԻԻՀ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ներդրումների համար ՀՀ նպաստավոր ոլորտները, որոնցում ներդրումներով իրանցի գործարարները կարող են հաջողությամբ դուրս գալ ԵՏՄ շուկա և իրենց ուրույն տեղն ունենալ դրանում:

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ԶԶ ԱՎԾ տվյալների հիման վրա վերլուծության ու հաշվարկների արդյունքում:

Մոհսեն ՀԵՅԴԱՐԻ

Իրանական ՕՈՒՆ ներգրավման համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում

Բանալի բառեր. օտարերկրյա ուղղակի ներդրումներ, բացահայտ և ներուժային համեմատական առավելություն, ԵՏՄ շուկա, նպաստավոր ոլորտներ

1991թ. հիմք դրվեց հայ-իրանական տնտեսական հարաբերություններին, սակայն մինչ օրս իրանական ներդրումները ՀՀ տնտեսությունում բավական փոքրածավալ են: Դրա հիմնական պատճառը ՀՀ ներքին սպառողական շուկայի փոքր չափն է: Սակայն 2015թ. ԵՏՄ անդամակցությամբ ՀՀ-ն կարծես թե լուծեց այդ խնդիրը և հայ-իրանական հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ: Հոդվածում ներկայացվում են իրանցի գործարարների համար ՀՀ տնտեսությունում ներդրումների նպաստավոր ոլորտները՝ ԵՏՄ շուկա արտահանելու տեսանկյունից:

Могсен ГЕЙДАРИ

Благоприятные сферы в РА для привлечения иранских ПИИ

Ключевые слова: Прямые иностранные инвестиции, выявленные и потенциальные сравнительные преимущества, рынок ЕАЭС, благоприятные сферы

Армяно-иранские экономические отношения были основаны в 1991, но до сих пор иранские инвестиции скудны в РА. Причиной этого является малый размер внутреннего потребительского рынка. Но в 2015г. Армения, став членом ЕАЭС, кажется решил эту проблему и армяно-иранские отношения вступили в новую фазу. В статье представлены благоприятные сферы армянской экономики для иранских инвесторов с точки зрения экспорта на рынок ЕАЭС.

Mohsen HEYDARI

Favorable spheres in RA for attracting Iranian FDI

Key words: foreign direct investments, revealed and potential comparative advantages, the market of the EAEU, favorable spheres

Armenian-Iranian economic relations were founded in 1991, but so far Iranian investment is too small in Armenia. The reason for this is the small size of the domestic consumer market. But in 2015 Armenia, becoming a member of the EAEU, seems to have solved this problem and the Armenian-Iranian relations have entered a new phase. The article presents favorable spheres of the Armenian economy for Iranian investors from the point of view of export to the market of EAEU.